600.0082.22.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2017 թվականի №82Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի №201Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՎԵՀ ԼՈՐԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի փետրվարի 28-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 12-ի «ՎԵՀ ԼՈՐԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Լոր ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №201Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ ՎԵՀ ԼՈՐԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Լոր ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0499 լիցենզիայի պայմանների՝

   1) 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2018 թվականի ապրիլի 19-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի մարտի 22-ը» բառերով.

   2) 5-րդ, 7-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր և Շենաթաղ համայնքների վարչական տարածքներն են՝ Որոտան գետի Լորաձոր վտակի վրա (բնական ջրահոսք):»,

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) Ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1726 մ և 1582 մ,
2) Հաշվարկային ելք՝ 1.40 մ³/վ,
3) Հաշվարկային ճնշում՝ 91.2 մ,
4) Փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 991 կՎտ:»,

«9. «Լոր ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1000 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ ՇՇ 80 Հ4-50, 500 կՎտ, 2012թ.,
2) գեներատոր №1՝ А4-400У-6У3, 500 կՎտ, 2009թ.,
3) հիդրոտուրբին №2՝ ՇՇ 80 Հ4-50, 500 կՎտ, 2012թ.,
4) գեներատոր №2՝ А3-13-42-8, 520 կՎտ, 1967թ.:»:

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի սեպտեմբերի 28-ի №2190/1015 գրությամբ ներկայացված №16-0031 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած ութ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 մարտի 2017թ.
ժամը 16⁰⁰